

մարանս կոչուեմք Արսէն արեղայի գրչին տակ, 2ւո կ'ամփոփենք ինչ որ կրցած ենք քաղել զանհրգան աղբիւրներէ: զըջաղբական գործունէութեան մասին:

Ա. — Գրիգոր Գրիչ, 1435ին օրինակած է, Ձմշկածագի Կարմիր մենաստանին մէջ, Մաեսոց մը, տէր Միչքիսիթի խնդրանքով. — Լ. Ս. Պաշիկեան, Հիշատակարաններ, ԺԵ. գար, Մասն Ա., 1955, էջ 448:

Թէ և գրիչին տնուհը չէ յիշուած. բայց աւերող չենք համարի որ առասպրիչ հետեւեալ յիշատակարանն է. «Մաեսոց Ձեւնաղբուքեան, որ կոչի Երիցատեար. Գրեալ ի Ձմշկածագ, ի Վանքն Կարմիր, յամի ՊՂէս = 1448. — Թ. Աղբար, Բ., էջ 387:

Բ. — Մկրտիչ Կրօնաւոր Գրիչ, 1436ին օրինակած է Գանձարան մը. — Պաշիկեան, Հիշատակարաններ, ԺԵ. գար, Մասն Ա., էջ 466:

Գ. — Ալէքսիանոս Արղ. Բասննցի, Գրիչ, 1537. որդի Մարտիրոսի և Եղիոսիթի:

1. — Գիրք Սալմոսաց, 1537ին օրինակած է բոլորգրով. — Tisserant, Cod. Arm., p. 147-8:

2. — Աւեսարան, օրինակած է բոլոր գրով. նիւթն է մագաղաթ (պրինաղիր). — Ե. Լալայեան, Յուցակ շէջ. Զեռ. Վառպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 535 և 1007: Երկիցն նկարագրուած է, նախ իրրև ԺԵ. դարու գրչութիւն և յետոյ իրրև ԺԵ. դարու: Երկուքն ալ սխալ սակայն. հիշոյն է ԺԶ. դար:

Դ. — Վարդան Սրեղայ, Գրիչ եւ Ծաղկող, 1613-1625, իր ուսուցիչները եղած են, Տէր Գրիգոր, Տէր Յովանէս զոր զծաղիկն ուսուցցօ, և Ստեփանոս Քաֆիայ զոր զգիրն ուսուցց ձրիս: Իր աշակերտն է եղած Թովմայ Եպիսկոպոս: Իր ընդօրինակութեամբ ծանօթ են բաւական ձեռագրիւրներ այսպէս:

1. — Աւեսարան, 1613ին օրինակած է. — Բ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 87, Թ. 22:

2. — Աւեսարան, 1614ին նորոգած և կազմած է. — Նոյն, էջ 81:

3. — Դասասանաղիքի Մխիթար Գոշի, 1618ին օրինակած է բոլորգրով. — Յուցակ Ձեռ. Էջմիածնի, 1863, Թ. 482:

4. — Սողոմոս — Ժամագիրք — Պաւսարակամոսոց. — 1621ին օրինակած է բոլոր գրով, գծուարին պայմաններու մէջ, Պարտիզարու Պետրոս Եպիսկոպոսին համար. — Հանդէս Ա.մ., 1924, էջ 123:

5. — Աւեսարան, 1623ին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին և Ս. Հրէշտակապետացն, Բենիկ Առաջնորդ Տէր Յովանէս Եպիսկոպոսին համար: Իր աշակերտը Թովմայ Ապս. Հատ աշխատած է թուղթը կոկելու. — Թ. Աղբար, Բ., էջ 329-330:

6. — Ծարակնոց, 1625ին օրինակած է, ընդ հովանեաւ Ս. Կարապետին, Ս. Նշտանին և Ս. Սարգսին, Տէր Եղիայի համար. — Թ. Աղբար, Բ., էջ 372:

Ե. — Արսէն Արեղայ, Քարտող Ք. Կազմող, 1682-1693. ծնողքը Արսէն և Կուլիստան. ուսուցիչը Ներսէս Վրդ.: Աշակերտը փոքրիկ ինչպէս, թուղթ կոկող և սրբագրող: Իր գործերէն յայտնի են:

1. — Մաեսոց, 1682ին օրինակած է, բոլոր գրով, Պրբիթցի Տէր Ղազարի համար. — Tisserant, Cod. Arm., p. 127:

2. — Աւեսարան, 1684ին օրինակած է. — Լոյս, 1906, էջ 569-570:

3. — Աւեսարան, 1693ին վերստին նորոգած և կազմած է. — Թ. Աղբար, Բ., էջ 366:

ԽԱՐՏԻՇԱՐԻ ՎԱՆՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Պարտիզարի Ս. Կարապետի Վանքը կը գտնուէր Ձմշկածագի մօտ, աւերակ վիճակի մէջ: Հատ Գարեգին Վրդ. Արուանձտահանցի աչինքին ճնացորդը դեռ նոյապայ և գեղեցիկակերտ իրաւամբ կը գրուէ մարդոյ հրացուքն և արցունք կը քամէ տեսնողաց աչքերէն. — Թորոս Աղբար, Բ. Հատոր, էջ 117:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Պարտիզարի Վանքին հնութիւնը ըստ ծանօթ տուեալներու կը վերանայ մինչև ԺԵ. դարու վերջ: Վանքին առաջնորդներէն կը յիշուին.

1. — Տէր Յովնանէս Առաջնորդ, 1449. — Լոյս, 1906, էջ 862:

2. — Ասեփանոս Բաբուճապետ, 1497. — Թ. Աղբար, Բ., 305:

3. — Կարսպետ Սպիկոպոս, 1502 — 1541. — 1511 ին Վանքին հայրապետն է եղած իր եղբայրը Յովհաննէս: Կային տասնեակ մը յիւրաքան եղբայրներ. Տէր Մարգարէ, Տէր Յովհաննէս, Տէր Յովսէփ Նաւաշ, Տէր Ալէքս, Տէր Մկրտիչ, Տէր Գրիգոր, Տէր Աստուածատուր, Տէր Թուճայ, Տէր Թազէոս, և Աւետիք Վարդապետ (Տաշեան, Յուլիան Զեռ. Վրեճնայի, էջ 407): Վերջին թուականը (1541) նթէ Կարսպետ Սպիկոպոսի մահուան րօւն տարին չէ, մօտիկ է շատ: Այդ տարին Վանքին Հայրապետն է եղած տէր Յովհաննէս և Վանքին մեծ ու փոքր միաբանները 26 կրօնաւորներ, ռթող զսարկաւազն և զանտեսն և զմզտեսիքն և զգործաւորքն: — Թ. Աղբար, Բ., էջ 364: Նաև Eu. Tisserant, Codices Armeni, Romae, 1927, p. 21:

4. — Պետրոս Արեւիպիկոպոս, որդի Տօնապետի. 1621 ին իր մասին հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Վարդան Քարտող. «Պետրոս արհիեպիսկոպոսն Պարտիշարու որ գնացեալ է ի Սերաստիա ի Ս. Նշան Վանքն անդ աշխատեցաւ բազում ատօք և անտի ի Թօխաթ շինեցաւ Վանս Գումարու որ է անարժան թշկացն կողմայի և Դամբանոսի և ետ իր հոգւոյն զյիշատակ զՍ. Գիրքս ի հալալ արգեանց իւրոց...»: — Զանդէս Անս., 1924, էջ 123:

5. — Ասուածատուր Սպիկոպոս, ժամանակը անձանօթ. — Թ. Աղբար, Բ., էջ 361 և 369: Թերևս 1623. — Նոյն, էջ 329:

6. — Տէր Միխայիլ, 1648, որուն ժամանակ կը վերանորոգուի երկրաշարժէն աւերուած Վանքը. — Թ. Աղբար, Բ., 362:

ՄՇԱԿՈՒԹԱՍԻՆ. — Կարտուշարի Վանքին մշակութային արդիւնքներուն մասին ևս քիչ բան հասած է մեզի: Կարսպետ Սպիկոպոսի առաջնորդութեան շրջանին հաւանաբար Վանքին մէջ գոյութիւն ունեցած է դաստատուն մը, նկատելով որ Յովսէփ կրօնաւորը երկիցս կը յիշե տեղանքն սկսաւորանօք 1502 և 1516 թուականներուն: Միաբաններու բազմութիւնն ալ ոյժ կու տայ այս ենթադրութեան: Գրչապրութեան աշխատաւորներէն և արդիւնքներէն ձանօթ են հետեւեալները.

Ա. — Ստեփանոս կրօնաւոր Գրիչ, 1434 ին օրինակած է Մաեսոց մը. — Լ. Ս. Ռաչիկեան, Հիշատակարաններ, Փե. Գար, Մասն Ա., Երեւան, 1955, էջ 447:

Բ. — Գրիգոր Եպիսկոպոս Գրիչ, ծնողքը Ելմելիք և Գոհար, Գեորգիյն Մինաս Գրապիւր, 1449 ին օրինակած է Աւեսարան մը, Պետրոս Քահանայի համար. — Լոյս, 1906, էջ 862:

Գ. — Կիրակոս Արեղայ Գրիչ, 1497-1511, աշակերտ Աւետիք Վարդապետի: Խարտիւրայի Վանքին մէջ օրինակած է.

1. — Մայր Մաեսոց, 1497 ին. առ ոտս Ստեփաննոս քաղ բարունապետի և իւր եղբորորդոյն Յովհաննէս հայրապետին: — Թ. Աղբար, Բ., 305:

2. — Մաեսոց, 1511 ին, ընդ հովանեաւ Ս. Կարսպետին, Ս. Աստուածածինին և Ս. Սարգսի զօրօվարին. բոլորդիր. — Տաշեան, Յուլիան, թիւ 123:

Դ. — Յովսէփ (Աբդ. Նաղաշ) Եպիսկոպոս Գրիչ, 1502-1541, ծնողքը Մարտիրոս — որ 30 տարի անտեսութիւն բրած է Վանքին — և Դշխոյ, Ուսուցիչները՝ Սիւմէոն Վրդ. և Առաքել Արեղայ. առաջինէն սորված է ծաղկելու՝ իսկ երկրորդէն գրելու սրուեստը: Թերևս սխալ չէ նոյնացնել Պարտիշարու Վանքին մէջ 1502 ին իբրև Արեղայ, 1516 ին իբրև կրօնաւոր, և 1541 ին իբրև Եպիսկոպոս յիշուող Յովսէփ Գրիչը, որուն ընդօրինակութիւններէն յայտնի են.

1. — Ծարակնոց, 1502 ին օրինակուած. — Տաշեան, Յուլիան, թիւ 209:

2. — Մաեսոց, 1516 ին, բոլորդիր. թուղթը կոկողն է տէր Թուճայ, իր հոգեւոր օրգին. — Tisserant, Cod. Arm., Romae, p. 21:

3. — Ծարակնոց, 1529 ին. — Յուլիան Զեռ. էջ միւսմէն, 1863, թիւ 1548:

4. — Աւեսարան, 1541 ին. — Թ. Աղբար, Բ., էջ 364-5: S. Der Nersessian, The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts, Vol. I., Dublin, 1958, p. 68:

Ե. — Գալուստ Գրիչ, 1550 ին օրինակած է Ծարակնոց մը, ընդ հովանեաւ Ս. Կարսպետի և Ս. Սարգսի. — Կիւլէտէրեան, Յուլիան Զայ. Զեռ. Աղբ. Մատենադարանին Հայոց ի Չալաթիա, անտիպ, էջ 1229:

Ն. ԵՊՍ. ԵՈՎԱԿԱՆ